



## 19. ԱՄԻՐ-ՇԱՄԻՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի թաքավոր կար, ուներ մի հատ տղա, անըմք Ամիր-Շամիր, Ախշիկ հել շուներ, Համեն օր լիսը բացվելուն պես թաքունին ասսուն խնդրում էր, որ մի ախշիկ տա, ինչ ուզում ա ըլի:

Օրերի մեկ օրը թաքավորի կնիկը էրկուֆորիս էլալ, իննը ամիս, իննը օր, իննը սըհաթ, իննը հրոպափա հանց կացավ, թաքունին ծունկը տվուց գեննին՝ մի հատ ախշիկ բերուց, էտ էրիխսեն կնքել տվին, անունը դրին՝ Սալրի, էտ էրիխսեն բշերը դառնը էր մարթագել, ցերեկը՝ մարթ, թաքավորը տեհավ, որ հիրա մալք շարթվը ա, սկսեց զարավուկ բռնիլ, որ տեսնի էտ ո՞վ ա ուտրմ:

Հատ մարթիկ զարավուկ բռնեց, կարացին ոչ բթնեն, Օրերի մի օրը թաքավորը ասեց հիրա տղին.— Այ տղա, ըսօր դու պըտի զարավուկ բաշես:

Հիրիկունը տղեն վե կացավ, հիրա ալմաստ դանակը ջիրիցը հանեց, մատը կտրեց, աղ ու տախտեղ արուց վրեն, որ կսկծա՝ չթողա քնի, նստեց, նստեց, նստեց բշերվա կեսը, տեհավ մի երա մարթագել նի մտավ գոմը, ձին քաշեց, կերավ: Տղեն նետը քցեց, մարթագելը ձեռը դեմ տվուց, նետը դիպավ ճկըթին, ճկիթը կտրվեց, ընկավ գետին: Վրա պրծավ եգին, ճկիթը վե կալավ, դրոց չերը, ընկավ էտ մարթագելի քամակը. տեհավ, որ ի՞նչ. էս մարթագելը հիրա քիրն ա. լիսադեմին գնաց օրորոցըմը թեք ընկավ ու սկսեց լաց ըմիւ

Մերը վե կացավ ծիծ տալու, տեհավ ախշկա մատը կտրված  
ա, դրա հըմար էլ լաց ա ըլըմ՝ Ասեց.— Կա չկա մեր էս տղեն էկել  
ա ախշկա մատը կտրել, որ թաքավորին ասի, թե քու տան հարամին  
քու ախշիկն ա, որ թաքավորը էս ախշկան սրպանի. Հաշկը վե չի  
ունըմ, որ ինձ ախշիկ ունենամ,

Էկավ թաքավորը նստեց հիրա տեղը, կանչեց տղին:

— Ա՛յ տղա, քշերս դու զարավուլ քաշեցի՞ր:

— Հրաման քե, թաքավոր, գողն էլ քթել եմ:

— Ո՞վ ա:

— Իմ էս պուճուր բիրը, կես քշերին տեհա մարթագել դառամ,  
Էկավ ձին կերավ, նետով տվի՝ ճկիթը կտրվեց, վե կալա դրի ջերս,  
ետո ընկա եննուցը, տեհա էկավ, օրորոցը մտավ Հրե՛ս ընէլ  
ճկիթը:

Թաքավորը զարմացավ, ասեց.— Ըստենց բա՞ն կըլի, Հարի  
էթանք տենենք:

Էկան տեհան, որ ախշկա ճկիթը կտրված ա, լալիս ա:

Մերը գոռաց, գոշաց.— Ես եմ՝ էս մի էրեխեն, ինձ սրպանա,  
դրան ձեռը մի տա, տղեն սուստ ա ասըմ, մախսուս ա էկել մատը  
կտրել:

Նազիր, վազիր էկան էրեխուն տեհան, գնացին դատ անելու:

Թաքավորն ասեց.— Նազի՛ր, վազի՛ր, կարելի՞ ա, որ մեկ ամ-  
սական էրեխան մարթագել դառնա, ձի ուստի:

Ասին.— Կարելի ա:

Տղեն Հառաւ էկավ, ասեց.— Որ ըստենց ա, թաքավոր, յա էտ  
ախշիկը պըտի սրպանես, յա ծս գլուխս կառնեմ կէթամ:

— էթում ես՝ գնա՛, ես իմ էրեխեն սրպանիլ չեմ:

Տղեն նի մտավ գոմը, հիրան ձին վե կալավ, նի էլավ գնաց:

Շատ գնաց, քիչ գնաց՝ աստված էր գիտում, գնաց հասավ մի  
մեշի. Տեհավ մի պառավ կնիկ ցախ ա թոփ անըմ:

— Բարի՛աջողը, — ասեց, — նանի՛:

— Ասսու բարին, հաղար բարի: Բա էտ ո՞ւր ես էթըմ:

— Ես էլ գիտում չեմ:

— Դե որ ըստենց ա, Հարի էթանք մեր տունը դոնադր:

Տղեն գնաց պառավի տունը դոնադ. նստացրուց հաց ուտաց-  
րուց, հարց ու փորց արուց, հիմացավ Համեն բան, հիրիկնապա-  
հին պառավը ասեց տղին.— Ա՛յ տղա, Հարի ես քեզ տանեմ պա-

Հեմ, տեսնենք ինչ դուա կգա, թե չէ Հ'իրիկվան իմ մարթը Քռու դևան  
ա, կգա՞ քեզ կվնասի:

Պառավը տղին տարավ, մի տեղ պահեց:

Հ'իրիկունը մարթն էկավ, ոշխարը բերուց, համբրեց, տեղավո-  
րեց, էկավ նստեց, ասեց.— Ըստեղից իսանի ֆոտ ա գալի, էս ի՞նչ  
ֆոտ ա:

— Այ մարթ,— ասեց պառավը,— մենք իսան ենք ու կանք,  
ֆոտը մեղնից կգա:

— Չէ՛, կնիկ, զարիր իսանի ֆոտ ա գալի:

Կնիկը ծածկեց համեն բան:

Քշերը նի մտան Հ'իրար կուշտ, պառավն ասեց Քռու դեին.—  
Ա՛յ մարթ, էն տարվա տղեն որ բերել ի, մի՛տդ ա՛, որ ասում ի՝  
մեռել ա՛:

— Ի՞նչ տղա, ա՛յ կնիկ:

— Էն տղեն, որ բերի, քա՛, միտդ չի՛:

— Միտս ա, ախա՛ր էն մեռավ:

— Չէ՛, չէ՛, էն մեռնօղը իմ տղեն չեր, է՛ն քթել ի ես, իմ տղեն  
տվել ի իմ քվորը՝ պահել էր, հիմի բերել ա, մի տեսնես՝ ինչ թավուր  
տղա ա դառել:

— Հա՛, ըդդար լավ տղա ա դառել, որ գովում ես, մի կանչի  
տեսնենք:

— Քնած ա, թող մնա, հ'առավոտենց կտեսնես:

Հ'առավոտը լիսը բացվեց, պառավը գնաց տղին բերուց. Քռու  
գեց տեհավ որ, օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, տղա՝ մի ազիզ տղա:

Ասեց.— Ո՞ւմ տղեն ես, աղա ջան:

Ասեց.— Քու տղեն եմ, ո՞ւմ տղեն եմ:

Ասեց.— Հաստա՞տ. բա հ'արի մի թշերդ պաշեմ:

Քռու դեր շատ հ'ուրախացավ, խոտեց տղին, հ'աշկերը, հ'էրե-  
աը պաշեց:

— Ե՛, բալա ջա՞ն, ես ծերացել եմ, հ'արի էթանք ոշխարը  
համբրեմ, տամ քեզ, ոտիդ մեռնեմ, դու տար արածացրու:

— Էթա՞նք:

Քռու դեր ոշխարը համբրեց, տվուց տղին ասեց.— Էս իրեք սա-  
րը կտանես կարածացնես, համա էն դիճը տանիլ շես:

— Ընչի՛ հըմար, ափու:

— է՛յ որթի, էս իմ հ'աշկը քոռացնողը իմ քիրն ա էլել, էն սարըմն ա կենըմ:

— Վա՛յ, վա՛յ, քիրն էլ ախազոր հ'աշկը կրոռացընի:

Քոռ դեին էրկու շուն ուներ, մեկի անըմը Ազան էր, մեկի անըմը՝ Գաղան էր, Տղեն վե կալավ էտ էրկու շունը ու ոչխարը՝ զնաց էն սարը, որդի դեի հ'աշկը քոռացըբել ին: Գնաց տեհավ, որ մի մենձ յինարու տակ մի սուրու ոշխար նստած ա, հ'ինքն էլ բերուց էն դիհը նստացըուց. տեհավ մի լավ մաղավոր կնիկ, տասնըհինգ հուս էս դիհը կախ էլած, տասնըհինգ հուս էն դիհը կախ էլած, նստած թամաշ ա անըմ հ'իրան:

Տղեն էկավ կուշտր, ասեց.— Բարըլիս քեզ, հոքի՛ր:

— Աստծու բարի՛ն, հազա՛ր բարին:

էկան հ'իրար կշտի նստեցին:

— Բալա զա՛ն, ո՞ւմ տղեն ես, հարցնիլը ամոթ լըլի:

— Ես քոռ դեի տղեն եմ:

— Իմ ախազո՞ր,

— Հրամանք ես:

Վե կացավ դրա հ'աշկերը պաշեց, թշերը պաշեց, ասեց.— Ասուն փառք, որ իմ հոր օջախը պըտի թաղանա, ախար իմ հերն էլ լավ մարթ էր, ես զիտըմ եմ, է՛, Գիտա՛ս, ինչ կա, ախազոր տղա՛, մենք հ'առաջ ախազորս հետ զումար ինք հաղըմ, հ'ինգ ոշխարով, տասը ոշխարով, քսան ոշխարով. հաղըմ ինք, վախտ հ'անցկացնում. հ'արի մենք էլ հաղանք:

— Հաղա՛նք, հոքիր, ի՞նչ եմ ասըմ:

Կնիկը ձեռը տարավ շիրը՝ իրեք հատ վեք հանեց. ասեց.— Գնա՛, մի պուճուր տափակ քար բե՛:

— Աի՞:

— Գնա՛ բե՛, արդարութունը լավ քան ա, վերերը կբցենք քարի վրեն, բու բախտից ինչ կգա՛ դու կտանես, իմ բախտից ինչ կգա՛ ես կտանեմ:

Տղեն գնաց, մի սալ բերուց դրուց մելտեղ, սկսեցին վեքերը թցիլը:

— Թա՞նիսը, հոքի՛ր:

— Տասսը՛, հը՛, հ'առաջինն ա:

Թցեց տղեն՝ տարավ տասսը:

— Թցա՛ քսանը:

Քցեց՝ էլի տարավ:

— Քցա՛ քառսունը, դումարը բսենց բան ա,

Քցեց՝ էտ էլ տարավ: Ըսենց տանելով՝ քոմյա տարավ: Կնիկը՝ վե կացավ հիրա կուլապը ու փետը առավ դարտակ տուն գնացաւեց: — Ախապոր որթի, հ'էքուց էլ կգաս, իմ հ'աշկերը դուս գա, ես քեզ ընչո՞վ պատվեցի, հ'էքուց մի քանի կտոր բան կշինեմ, կգաս, ըստեղ հաց՝ կուտենք:

Տղեն կնկա ոշխարն էլ քշեց գնաց տոՓի: Թոռ դեղ տեհավ, որ էրկու հիրա ոշխարի դդար տղեն քշում բերում ա:

— Ա՛յ տղա՝, էտ ի՞նչ ոշխար ա, — ասեց թոռ դեղ:

— Ափու ջան, — ասեց տղեն, — ոշխարը զոռեց էն դիհը, խամ տղա ի, կարացի ոչ հ'առաջը առնեմ, գնացի տեհա, որ քու թիրը մի լինարի ծառի տակ նստած ա, ասեց. «Հ'արի զումար հաղանքօ, ես էլ հաղացի, էս ոշխարը տարա:

— Է՛լ տանես ո՛չ, դատեղ տանեմ, էլ շտանես, իմ հ'աշկը բոռացնողը դա ա, մի խաթա կրերի քու զլխին՝ իմ տոմը կբանդվի:

— էլ տանիլ չե՞մ:

Հոքիրը գնաց տուն, հ'ամեն բան աղվով սարքեց, որ ուտողը հաղար կտոր ըլի, ինչ ա՝ հ'առավոտը էն տղին ուտացնի, որ էտ տղեն պատոի, հ'ինքը ոշխարը քշի, բերի հիրա տունը:

Հառավոտը բողնոցի մելը սարքեց ու վե կալավ գնաց դրուց ախապորի զլխին, հ'ինքն էլ կշտին նստեց:

Քշերը քնահարամ էր մնացել, բունը հ'աշկերը կոխել էր, մին բաց էր անըմ, մին խփըմ: Մըն էլ տեհավ, տղեն էկավ:

— Ա՛յ տղա՝, — ասեց, — քեզ ինչ էլավ ըղար շախ:

— Դե՛, հոքիր, անջախ, ճամփեն երկար էր: Հոքիր ջան, ես գիտեմ, դու քնահարամ կըլես, ես էլ նոր հաց կերա. վե կաց, գլուխըդ դիր ծնկանս, մի քիլ քնի, ետո վե կկենաս՝ հաց կուտենք:

Քնահարամ կնիկ, զնելուն պես խոմփաց, սար ու ձոր խոմփոցը բունեց: Տղեն կուլարը ծալեց, դրուց զլխի տակ, ծունկը հանեց, հ'ինքը վե կացավ, նի էլավ շինարին: Բուն ծերի ճուղքը կուացրուց, բերուց հոքոր եռսուն հուաը դրա ճղբերիցը կապեց, դաֆիլ որ ճուղքը բաց թողուց, հոքին մարեց, ճուղքը կնկան առավ բանցրացավ: Կնիկը ձենը քցեց, սար ու ձոր լացացրեց: Եռնը էկավ ոտով տվուց՝ բոթնոցը շուռ տվուց ջրի մել:

Տղեն հ'իրիկունը ոշխարը քշեց, գնաց տուն:

- Հերը դուս էկավ, տեհավ տղեն գալիս ա շատ ժանդր:
 — Վա՛յ հարա կենա, տղես հիվանդացած լըլի՞:
 — Բարի՞րիկուն, ափու ջա՞ն,
 — Բարին, հազար բարին, էտ ընչի՞ ես ծանդր գալի,
 — Ե՛ ափու ջան, քեֆս լավ չի, գլուխս հառավոտվանից ցա-  
 լըմ ա:
 — Վա՛յ իմ հաշկերը դուս գա, արեց տված կըլի գլխիդ,  
 արանից դենը ես կտանեմ, որթի՞ ջան:
 Էլ հորը բան շասեց, թե հոքորը կախ եմ տվել, ընենց արուց,  
 որ հինքը գնա հաշկովը տենի:
 Հառավոտը Թոռ դեր վե կացավ, քշեց սարը ոչխարը, գնաց  
 տեհավ մի բարակ ձեն ա գալի, ասեց. «Մի գնամ տենեմ էս ի՞նչ  
 ձեն աւ» Ծները քշեց հառաշ՝ գնաց. Տեհավ ի՞նչ՝ շինարի ծերիցը  
 մի զատ կախ էլած ա, տեհավ հիրա թիրն ա:
 — Ախապեր ջա՞ն, ինձ մի իլլաճ արա՛:
 — Էտ քեզ ըտենց ո՞վ ա արելի
 — Ա՛խ քու տղեն, ա՛խ քու տղեն. գիտես քու ժառանգի հու-  
 նարը, մուռներդ, ինադը հանեցիք, դե հըմի գնա՛, հարխեին ման  
 արի:
 — Օխա՛յ, — ասեց Թոռ դեր, — մի զամ հիրիկունը, ոտից  
 բռնեմ՝ լիզելով ընշար գլուխը գամ, հըմի գիտեմ, որ հաստատ իմ  
 տղեն ա:
 Էկավ հիրիկունը շըշկիլ-շըշկիլ ոչխարը արուց ներսի ու ձեն  
 տվուց կնկանը. ևնիկ ջան», էտ հասակըմը ջան ասած չկար կըն-  
 կանը, կնիկը զարմացավ թե էս ինչ բան էր, ասեց. — Տղեն  
 մո՞նց ա:
 Թե. — Շատ լավ ա:
 — Դե՛ կանչա՛, կանչա՛ տենենք:
 Մերը ձեն տվուց. — Ամիր-Շամիր ջա՞ն,
 — Համմե՛:
 — Հարի՛, հերդ կանչըմ ա:
 Վաղելով էկավ հոր կուշտը: — Հը՛, ափու ջան, հո վնաս չի  
 պատահելի
 — Զէ՛, բոյիդ մեռնեմ, հարի իմ կուշտը:
 Բռնեց ոտիցը պաշելով էկավ գլուխը, որ սար ու ձոր համ  
 պռավ:

Մերն ասեց.—Ա՛յ քու տունը շինվի, էրեխուս սըպանեցիր բոլ ա, է՛:

— Է՛յ կնիկ, դու որ հ'իմանաս իմ տղի արածը ի՞նչ ա, դու ինձնից շատ կպաշես:

— Էտ ի՞նչ ա արել:

— Տո՛ իմ եռուն հինգ տարվա դուշմանին կախ ա տվել. հաստատ իմ տղեն ա, ես քեզ էլ զուրբան, քու տղին էլ: Գե՛ պառավ, դու զնա՛ քու տեղը քնի, ես իմ տղին իմ ծոցը պըտի առնեմ, քնիմ:

Տղեն առավ ծոցը դրուց, քնեց, քանի զարթնեց՝ սիրեց: Հառավուտը հ'իրա ոլխարը վե կալավ զնաց: Տեհավ ճլոց-մլոցը կտըրվել ա:

Ասեց.— Էթամ տենեմ ինչ էլավ էտ անիծածը:

Գնաց տեհավ՝ չորացել ա, ոնց որ տառեխը:

Տղեն հ'ինքն հ'իրեն մտածեց, ասեց. ոէս ես ի՞նչ եմ անըմ, իմ հոր թաքավորութունը թողել եմ, էկել եմ քոռ դեի՞ն եմ տղութուն անըմ. լավն էն ա ըլեղ էթամ իմ հոր տոմա:

Պառավն էկավ, տեհավ տղի նիաթը կախ ա:

— Հը՛, որթի զան,— ասեց,— խի՞ ես նիաթդ կախել:

— Ես էթալ պտեմ իմ հոր տունը:

— Վա՛յ, որթի, խի՞ ես տենց անըմ. Հորիցդ շատ կարողութուն ունենք, ձի ասես ունենք, ոսկի հ'ախալուր ունենք, հ'ամեն բան ունենք, էթալ մի՛:

Ասեց. «Տանեմ մեր կարողութունը շանց տամ, բալքի հավիսի զա, էթա ոչ», Տարավ հ'ամեն ինչ շանց տվուց տղին, տարավ մի օթախ, մի հ'ախալուր կար, տղին ասեց.— Թաքուդ կոխա ջրի մեշտասա՝ ո՛՛թառնա՝ ոսկին:— Տղեն թաքուր կոխսց ջրի մեջ՝ դառավ ոսկի: Գնացին մի ջոկ հ'ախալորի վրա, ասեց.— Հ'էրեսըդ լվա՛, ասա. Ո՛՛թառնամ Հուրի թաքավորի տղի նմանա:

Հ'էրեսը լվաց, տեհավ որ հ'էրեսը պսպղաց, ասեց.— Դե զնա՛ մի հայի բե, նանի զան:— Հայլին բերուց, թամաշ արուց, տեհավ տղա՛ քի տղա:

Տարավ մի ջոկ օթախ էլ, մի հատ ինձոր վե կալավ, տվուց տղին:

— Էտ ի՞նչ ինձոր ա, նանի՛ զան,— ասեց տղեն:

— Որ կմենձանաս՝ դիլիմ արա, կեսը կե՛, էլեղ կդառնաս դաշել տղա: Լսենց կարողութուն ունենք հա՛, էս բաց թողաս հ'ո՞գ

Քիաս, բու հորը ըտենց բաներ չումի հո՛, դե նստի կե՛ էլի՛, աստ-  
ված քեզ կեր ա կամեցել, էլ հո՞ւր ես էթըմ:

— Նաևի՛ շան, իմ հոր Փողը ըստիան քաղցր ա, էթալ պտեմ:  
Պառավի մեշրը կոտրվեց.—Հե՛յ վախ,—ասեց,—զուր ա. մնալ  
չի, է՛յ որթի, որ մնըմ չես, դու զիտես,—ասեց ու լաց էլավ:—  
Դե հարի, էթանք իրեք բան էլ ունեմ, տամ գնա:

Պառավը տղին տարավ մի օթախ, մի տոլար բաց արուց, մի  
կտոր աղ տվուց, մի հատ դանակ, ետո տարավ գոմը, իրեք ձիուց  
մաղը բաշեց, տվուց տղին:

— Դե, — ասեց, — դու կաց ըստեղ, ես գալիս եմ:

Գնաց մի պուճուր բութուրկա բերուց, մեշր լիբը ջուր՝ րերանը  
դայիմացած:—Ա՛յ տղա, — ասեց, — էս ջուրն էլ քեզ պետքը կգաւ:  
Դե հարի՛ դրանց հունարն ասեմ, որ էթաս: Օխտ օր եւ ասիլ չեմ  
Քոռ դնին, դու արխեին շխտ օր էկթաս, օխտ օրեն ետք ետ թամաշ  
կանհս, կտենես քամակիցդ մի թող ա վեր ըլըմ, իմաց կաց. որ իմ  
Ժարթն ա՝ գալիս ա քեզ հազար կտոր պըտի անի: Դանակը կրցես  
բամակդ, կդառնա մի երա սուր սար, ընլանք ոնները կուտառելով  
Հու սարը դեին նի րլիւ՛՝ դու էփեճա կլթաս. կտեսնես չէ՝ ամայ աճ սլդի  
էն ա կալնելու ա՝ աղը քցա՛ քամակդ, կդառնա աղի սար ահազին.  
Կտրած ոտ՝ աղ, ի՞նչ կանի: Մրմնշալով, գոռալով պըտի դա են-  
նուցդ, տեհար էտ սարն էլ հանց կացավ, ձեռիդ բութուրկեն տուր  
քարով, կդառնա մի ահազին ծով, էլ կարալ չի հանց կենալ: Կասի.  
«Ա՛յ տղա, կաց հլա տենեմ քեզ էտ ով ա սարվացրել, ինձ ասա՛,  
գնա՛»: Ասա՛: Թքու կնիկն ա սարվացրելու Կասի. «Ա՛յ մեշր կոտրի  
իմ կնկա», կթողա կդա: Կպրծնես ձեռիցը: Ինչ ժամանակ էլ որ էս  
ձիերի մազը բաշես, ձին կշտիդ կաննած կըլի:

Տղեն պառավի ձեռը պաշեց, ընկավ ճամփեն; գնաց: Օխտն օր  
գնաց, վրա ութին ետ թամաշ արուց, տեհավ որ մի զի; ճվլոց ա  
գալի, երկինք-գետինք թողը բռնել ա: Ասեց. «Կա չկա, էս քոռ  
դեն ա գալի, կաց էս դանակը քցեմ»:

Դանակը քցեց, դառավ մի ահազին սար, սուր-սուր քարեբով:  
Քոռ դեր ոնները կտրատելով նի էլավ, տղեն տեհավ որ էտ սարը  
հանց կացավ՝ աղի կտորը քցեց: Պառավ մի աղի սար: Կտրած ոտը  
աղը քառեց, մրմնշացրուց, համա՛ էտ աղի սարն էլ հանց կացավ.  
Վիրնուց բութուրկեն տվուց քամակի քարովը, տեհավ ահազին ծով  
դառավ: Քոռ դեն էկավ ծովի դրաղին նստեց:

— Ա՛յ հա՛յ, — ասեց, — էտ քեզ ո՞վ սարվացրուց, ինձ ասա՞ռեգնա:

Ասեց. — Քու կնիկը:

— Այս, — ասեց, — մի տուն հասնեմ՝ ե՞ս դիտեմ, — ասեց ու էտ դառավ:

Տղեն զնաց, Գնաց հասավ Շիրա հոր քաղաքը: Տեհավ ձենձուն չկա, զնաց մտավ Շիրա հոր պալատը, թիրը վե կացավ էկավ Հառաշը, ասեց. — Բարով, ախտեր ջան, դու բարով էկար, էս ա. քառսուն օր ես ֆող եմ ուտըմ, լավ էր որ էկար:

Ասեց. — Քի՞ր, ուտըմ ես ինձ, կեր, թող մի նիշնեմ կտուրը, իմ հոր քաղաքին թամաշ անեմ, վե գամ՝ կեր:

Ասեց. — Լավ, նի՞ւ:

Տղեն նի էլավ, հանեց ծոցի սիպտակ ձիու մազը՝ ալրիալը ձին էկավ: Զին նստեց տղեն, ասեց. — Ա՛յ քիր, զնացի ես, դե՛ Շարի:

Հրեղեն ձին զնաց, թիրն ընկավ եննուցը ճշալսվ. Հա՛յ, Հա՛յ էր՝ որ կալներ էտ հրեղեն ձիուն, էկավ նի էլավ էն շինարին, որ հոքորը կախ էր տվել, ձեն տվուց. ԱԱղան, Գաղան:

Էկան շները, վեր էկավ ծառիցը, ուն ձիու մազը քաշեց՝ սև ձին էկավ, նի էլավ: Մի դհիցը Շինքը կոիվ արուց բվոր հետ, մի դհիցը շները: Տվուց քվորը, վեր ընկավ. շները թափեցին ալրիալը ցրրվեցին, Շները էկան, էտ տղի ոնները լիզեցին, ասեցին. — Քոռ գեն էկավ, Շիրա կնկանը հաղար կտոր արուց, որ դու էլ գաս, քեզ էլ ըտենց կանի, զլուխդ առ զնա՛:

Տղեն շներին սիրեց, կարմիր ձին քաշեց զնաց: Գնաց, մի բարակ ճամփի ռաստ էկավ, թշեց զնաց էտ ճամփուլը: Շատ զնաց, թիշ գնաց՝ աստված զիտի, զնաց տեհավ մի հատ արարդզու շոր հաքած մի սիրուն ախշիկ քնած ա,

Ասեց. — Վե կացնեմ՝ ինչ անեմ, վե կացընեմ ոչ՝ ինչ անեմ, լավն էն ա՛ վե կացնեմ:

Զեն տվուց, էտ ախշիկը վե կացավ, ասեց. — Քիշ հեռացի, ես էլ իմ սարքը տենեմ, գամ կովենք:

Տղեն հեռացավ, ախշիկը նի էլավ ձին, էկավ:

Տղի ձին խոսաց, ասեց. — Ա՛յ տղա, էտ որ կա՛ նազիկ թաքվորի ախշիկն ա, մուրազ ա արել, որ Շիրան զոռող տղին առնի. մուղաթ կա՛ց, զոռքա կովող ա, շատ տղի գլուխ ա կերել:

Ախշիկն էկավ կաննեց: Տեհավ որ գրուատ շատ լավ կովող ա,

Հաշկերիցը կրակ ա թափում։ Կախ էլավ հիրա ձիուն՝ թամաշ ա-  
ռուց, տեհավ որ հաշկերիցը սելավի պես արտասունք ա գալի։  
— Ա՛յ ձի, — ասեց, — խի՞ ես լաց ըլըմ։  
— Է՞ս, ցավիցս խարար չես։  
Սկսեցին կռվիլը։  
— Հը՛, տղա, սրեն ո՞ւմն ա։  
— Թունն ա, դու զոնաղ ես։  
Ախշիկը գնաց էկավ գուրզը ընենց քցեց, որ սար ու ձոր շըղ-  
շըղկոցն ընկավ, տղեն վրա պրծավ՝ գուրզը կալավ։  
— Ա՛ռ, ղայտով գուրզդ դցա՛, ես էրեխա չեմ։  
Ախշիկն ասեց. — Առավ ինձ, ես իմ գրզի ուժը գիտեի, դրան  
հարիր կտոր անիլ պտեր։  
— Կարելի ա քնահարամ ի, մին էլ քցեմ, — ասեց ախշիկը, —  
մին էլ գնաց էկավ՝ ձիու թամքը կանեց ու գուրզը քցեց։ Սար ու  
ձոր էլի դդրտաց։  
— Ա՛ռ գուրզդ, բոլ ա, մեշտեղիցդ հարիր կտոր կանեմ, —  
ասեց տղեն ու գուրզը տվուց հիրան։  
— Էրկու հատ էլ նետ քցելու ունես, քցա՛։  
Ախշիկը քցեց, Տղեն ձիուն ղամշի տվուց, ձին հավալամիշ  
էլավ, նետը հանցավ։  
— Կա՞ս տղա, թե չկաս, — ասեց ախշիկը։  
— Կա՞մ, — ասեց տղեն։  
Ախշիկը վեր էկավ ձիուցը, հիրա նետը վե կալավ, էլի մրն էլ  
քցեց։ Տղեն էլի ձիուն ղամշի տվուց, ձին հավալամիշ էլավ, նետը  
հանցավ, ընկավ գետին։  
Ախշիկա հաշկերը արինը կոխեց. — Կա՞ս, թե չկաս։  
— Կա՞մ, ո՞նց թե չկամ։ Հըմի կտենես ինչ կանեմ քեզ, Համա  
էրկու թուր էլ ունես, քցա՛։  
Ախշիկը քաշեց թուրը, վրա պրծավ տղին, էլեղ տղեն ղամշին  
քաշեց ձիուն՝ հավալամիշ էլավ։ Քցեց, տեհավ դարտակ հանցկա-  
ցավ, ասեց. — Մի կաննի՛ է՛, մեշտեղիցդ օխտը կտոր կանեմ։  
Տղեն ասեց. — Կաննած եմ, կաննա՛ծ, վեր հարի, թուրդ վե  
կալ։  
Ախշիկը մինն էլ քցեց, էլի զուր հանցկացավ! — Է՞, այ տղա, —  
ասեց ախշիկը, — դու ինձ ախտեցի՛ր, վե գալ պտենք, ըստեղ կոխ

պրծնենք<sup>1</sup>. թե ըստեղ էլ ախտեցիր, զաթի ես քունը, դու իմը՝  
Վեր էկան, ախշիկն ասեց.— Բարով, հազար բարով, այ տղա-  
հիմի կոխ պրծնենք:

Վրա պրծան հիրար, ախշկանը մի սամթ ուներ, հուսերից բռռ-  
նած վախտը, հինքը մեկնվը էր, տղին քցում: Պտըտվեց, պտըտ-  
վեց, բռնեց տղի հուսերբիցը, տղեն տեհավ որ մանները մտել ա-  
մսի մեշը, արինը տվուց գրուսը, հաշկերիցը կրակ թափեց:—  
Այս,— ասեց,— մի գնեմ ծնկանս տակը, ես գիտեմ թե քեզ ինչ  
կանեմ:

Ախշիկը որ մեկնվեց, տղեն ծունկը դրուց սրտին՝ թուրը բա-  
շեց, թուրը որ բաշեց, ախշիկը ծծերը բացեց: Տղեն թուրը վե-  
դրուց:— Վե՛ր, — ասեց, — ախշի, վե՛ր:

Ախշիկը վե կացավ, ասեց.— Դե դանակդ հանա՛, ծամիս մեկը  
կտրա, մաններիս բթերը քամակիս կապա, արա՛ հառաշդ, էթանք  
իմ հոր կուշտը:

Տղեն ախշկա ծամը կտրեց, մանների բթերը կապեց քամակին,  
արուց հառաշը, հինքը ձին նի էլավ, նրա ձին էլ բաշեց:

Եփոր քաղաքին մոտեցան, ախշիկն ասեց.— Այ տղա, թուրդ  
հանա դի ճակատիդ, գոռալով գնա՛, վախենաս ոչ:

Տղեն թուրը հանեց, դրուց ճակատին, ընենց գոռաց, որ թա-  
քավորը թախտին վե թուավ, դրա էկավ: Դուս էկավ, տեհավ որ-  
ախշիկը եսիր արած բերած ա: Որ տեհավ՝ հաշկի լիսը բուռը  
թափվեց:— Հե՛յ վախ, — ասեց,— էս ի՞նչ հողածին ա, որ իմ ախ-  
շրկանը զոռել ա:

Ախշիկն ասեց.— Հե՛ր, մի տղա եմ ճարել, որ նմանը աշխար-  
քումս ըլիլ լի:

— Վե կացեք, վե՛, — ասեց թաքավորը:

Տղեն թուավ ձիուցը, էկավ որ ախշկա մազը ետ անի, ախշիկն-  
ասեց.— Իրավունք չունես, էթալ ստենք ատենը:

Նի էլան, գնացին թաքավորի հառաշը կաննեցին:

Թաքավորը սկսեց հաշկերիցը թափիլ:

Վեղիրն ասեց.— Խի՞ ես լալիս, մի տղի պըտի տայիր, հազիր-  
լավ տղա ապատահել:

Թաքավորն ասեց.— Էլ իմ սընըռ պահողը ո՞վ կըմի:

1 Թռենք, (ծանոք. բանահավաքի):

*Տղեն վրա բերուց.—Քու քանը սաղ ըլի, ես կպահեմ, թողալ չեմ որ մի դուզ հ'անց կենա,*

— Կարելի ա իմ ախշիկը քու պատկերին ա խափվել.—ասեց թարավորը,—թե որ դու դդար դոշադ ես, իմ տղին նուռեի դավրիշը բռնել ա, թե գնացիր բերիր՝ էնա կհավատամ, որ դու ախշրկանս գոռել ես, կտամ բեզ: Որ բերես տղես՝ լիզուդ ինչ պտըտի՝ կտամ: Դե հ'էքուց հ'առավոտենց վե կաց գնա՛:

*Քշերը քնեց տղեն ըտեղ, արլորը կանչեց, քնից օյանմիշ էլավ, ասեց.—Այ հա՛յ, ես մի ախշկա խաթեր էթամ նուռեի դարվիշի հետ կովեմ: Համա ինչ արած, էթալ պտեմ:*

*Մըն էլ տեհավ ախշիկը դուռը բաց արուց.—Ա՛յ տղա, հորս ասա՛ թե ես զիտեմ ոլ դրա տեղը, թող ախշիկդ գա ինձ շանց տա, ևտ դառնա: Թե որ հ'ուրիշ մարթ զիտի՝ ուրիշ մարթ դրկա՛, բան չկա:*

*Հ'առավոտը լիսը բաց էլավ, տղեն գնաց թարավորի կուշտը, ասեց.—Թարավորն ապրած կենա, էթալը՝ էթամ, համա տեղը զիտեմ ոլ. կուզես ախշկանըդ դրկա ինձ հետ գա, շանց տա, ետ դառնա: Թե հ'ուրիշ մարթ կա, ուրիշ մարթ դրկա, հետն էթամ:*

*Թարավորը շատ մտածեց էտ բանի հրմար. ոՂրկեմ՝ ինչ անեմ, դրկեմ ոլ՝ ինչ անեմ: Վայ թե ախշիկը առնի, էթա, ես մնամ շլինք ծուռքու:*

*Նազրի մինն ասեց.—Դու հ'ուրիշ բան մտածիլ մի՛, թարավոր, սա ընենց տղա լի, հ'աշկերիցը վարթ ա թափրմ:*

— Որ բտենց ա, ախշի, գնա՛ շորերդ փոխա, արարդդի շորերը հարի. տար էտ տղին շանց տուր, վե կաց, հ'արի. զառնաս հա՛, կսափվես ոլ տղին, մենք մնանք ըստե կասկածավոր:

*Հարավ ախշիկը հ'իրա շորերը, նի էլավ ձին, բշեցին: Գնացին, տղեն բող ձիու մազը բաշեց, բող ձին էկավ, նի էլավ՝ գնացին:*

*Ախշիկն ասեց.—Իմ հորիս, զարթնե<sup>1</sup> էս, էլ կոիլ արած կա՛ս. թե հ'առայի անքամն ա կոիվդ՝ ետ դառ էթանք ձիր տունը, թե լէ հ'ուրիշների հետ էլ ես կոիվ արել՝ էթանք: Եատ դժար տեղ ա, հա՛:*

— Ի՞նչ դժար ա:

— Դե կա՛ց, պատմեմ քեզ: Նուռեի դարվիշը անմահ ա, հա-

<sup>1</sup> Բացի, (ծանոր. բանահավամի):

զար անքամ մանդր խորովածի թիքա եմ արել, էլի սաղացել ա, կուշտու կաննել, անճախ հոքիս ազատել եմ՝ էկել մեր տուն:

— Ախչի՛, ինչ տեղ որ աստված ըլի, մենք ինչ բան ենք, թե աստված կամեցել ա՝ կսպանեմ, տղեն վե կոճամ, կրերեմ:

Հասան նուռեի դարվիշի դարգյահը՝ տղեն ասեց ախչկանը.— Դե ետ դառ:

— Ես ո՞նց ետ դառնամ, թո՛ղ իմ արինն էլ քու արնի հետ խառնվի, իմ արինը քունից կարմիր ա՛:

— Ետ դա՛ռ:

— Ըստենց բան կըլի՛, առ թուրս իմ շլինքը կտրա, նոր ասա՝ ետ դառ, — ասեց ախչիկը:

— Է՛, հըմի հորդ ո՞նց հավատացնեմ, որ ես եմ քերել քու ախպորը:

— Ախսպերս համեն բան կասի. դե՛հ ես ըստի կկաննեմ, դու ինչ հունար ունես՝ խարջա՛:

Տղի ձին ասեց.— Տղա, զիտե՛ս ինչ կա. Նուռեի դարվիշը բախ- չի միշին մի հախոպուր ունի, հախոպի ոտը տե՛նում ես, դու ա էկել, զյոլ ա կաննել ընտեղ, էն սև ջուրը. որ դու կոփվ անես, գլու- խը կտրես, թու կըլի կէթա կընկնի էտ զյոլի մելը, էլի կսա- ղանա:

— Բա ի՞նչ կըլի դու հնարը:

— Կէթաս զյոլի հառաշը կբանդես, թամուզ դուս կտաս ջուրը, նամը կկտրես: Թաքավորի ախշըկանը կասես. «Ձող բե՛ր, բար բե՛ր, փեշով, ձեռով կրա, բե լքցրա էտ փոսը՝ դղա՛»: Ետո էն էկաժ ջուրն էլ դայիմ կկտրես, որ նամ լտա, էն վախտը կոփվ արա, ար- խեին, էլ վախսի մի՛:

Գյոլը կտրեցին, ոտի ջուրն էլ կտրեցին, լավ ֆողեցին, նամը կտրվից. Տղեն զնաց մերդանի գլխին կաննեց՝ գոռաց.— Դարվիշ ախսպեր, դու հարի՛, դոնաղ եմ էկել:

Մի արար դուս էկավ, ասեց.— Ինչ ես ջանավարի պես գոռըմ, էս ա դուս ա գալի:

— Թեղ արա՛, ասա՛ դուս գա, — ասեց տղեն:

Արարը զնաց դարվիշի կուշտը:

— Էտ ի՞նչ ձեն էր, արար, — ասեց դարվիշը:

— Մի դալուղանլի տղա գոռըմ ա, քու ճամփեն ա պահըմ, — ասեց արարը:

Դարվիշը դու էկավ, նստեց հիրա դեղին ձին, քցեց թեխն դալխանը, կապեց թուրը, առավ ձեռը հիմսում փթանոց գուրզը՝ քշեց: Զին հավալամիշ էլավ:

— Սրեն ո՞ւմն ա, ա՞յ տղա, — ասեց:

Ասեց. — Քո՞ւնն ա,

— Զէ', — ասեց դարվիշը, — դու դոնաղ ես, քո՞մն ա:

— Եատ լա՞վ:

Զին ասեց. — Ա՞յ տղա, մի հատ դամշի կտաս սալրուս՝ ես հավալամիշ կը լեմ, ընենց վե կդամ էտ դարվշի վրեն՝ որ թուրդ քցես՝ գլուխը կէթա:

Տղեն ետ թամաշ արուց, տեհավ որ ախշիկը կանսած փորի աղիքները եռըմ ա. տարավ բերուց ընենց մի դամշի տվուց ձիու սալրուս, որ ձին հավալամիշ էլավ, բանցրացավ երկնոք. վեր էկավ դարվշի վրեն. Տղեն թուրը քցեց՝ դարվշի գլուխը թոցրուց: Տեհավ գլուխը կանսում չի, թոլ ա ըլըմ:

Զին ասեց. — Տղա՛, վեր հարի եննուցը գնա՛, մանդր-մանդր կոտորի: — Տղեն ձիու վրիցը վեր էկավ, ընկավ գլխի քամակը, ևն գնաց, հինքը խիեց կոտորեց, հասավ փոսի կուշտը, մնացել էր մի գրթոշի դդար. էն էլ կոտորեց:

— Դե՛, — ասեց ձին, — էլ բան չկա, հարի գնա՛:

Մըն էլ տեհավ ախշիկն էկավ, փաթըթվեց՝ բիլակը պաշեց: Հիրար հետ նի մտան տունը, թրերը քաշեցին մտան օթախը, տեհան էտ անիրավ դարվիշը մի Հազարան բիլըու ունի, որ խոսում ա՛սար ու ձոր կանանցը ա: Նի մտան էն դհի օթախը. տեհան ախշիկա ախպերը ժնջով կապած ա: Ախշիկը որ ախպորը տեհավ՝ ֆոքին քանդվեց, ընկավ վրեն: Տղեն ժնշիլը ետ արուց, իրեք սհամթ թիրու ախպեր ընկած մեռած մնացին: Իրեք սհամթից էլան:

Տղեն ասեց. — Ախշի, հէրեսդ սրփա:

Ախշիկը աղլուխը հանեց, հէրեսը սրփիեց:

Ախպերն ասեց. — Ա՞յ քի՛ր, դու ըլես, քու աստվածը, ինձ տպատողը դու ի՞ր, թե էս տղեն:

— Էս տղեն էր:

— Ա՞յ տղա, որ ըտենց ա, իմ քիրը տվի քե՛զ, բարով վայելես:

— Դե վե կացեք, էթանք, մեր հաշկը ճամփին ա, — ասեց տղեն:

Վե կալան Հաղարան դաստան բիլբուզ :

— Ա'խ,— ասեց ախշկա ախպերը,— քանի՛ հետ ես էկա քեզ  
Հրմար ու բռնվեցի: Ես քեզ տանեմ ընենց պահեմ, որ գարվիշն էլ  
ընենց պահած լըլի:

Նի էլան ձիանը քշեցին, հ'իրանց քաղաքին մոտացան:

Ախպերն ասեց.— Ա՛յ քիր, դե հ'առաջ ընկի, գնա՛ մեր հորն  
ու մորը հ'աշկալիս տար:

Ախշիկը քշեց գնաց տուն, խարար տարավ հորն ու մորը, թե.—  
Հաշկներդ լիս ըլի, Ամիր-Շամիրը գալիս ա, համ իմ ախպորն ա  
քերում, համ էլ նուռեի դարվիշի Հաղարան բիլբուզը:

Թաքավորը վե կացավ, վեզիր-նազիրով, սազով-սանթուրով,  
մարմով, դոշունով էկավ Ամիր-Շամիրի հ'առաջը:

Ամիր-Շամիրը քշեց ձին, թուրը հանեց, դրուց ճակատին,  
ասեց.— Ըհը՛, թաքավոր, էս քու տղեն, էս էլ քու Հաղարան դաս-  
տան բիլբուզ:

Թաքավորն արմացավ-զարմացավ, քշեց հ'առաջ Ամիր-Շա-  
միրի ոսկե քարուզ պաշեց, գնաց տղի շնորհն ընկավ:

Վե կացան, էկան տուն:

Թաքավորն ասեց.— Ուզա տա՛մ, Ամիր-Շամիր շա՛ն:

— Քու սազութունն եմ ուզըմ:

— Ուզա՛ տամ, էտ բան չէր:

— Ողըմ եմ քու ժողովրթի կեսը:

— Տվի՛, որթի:

Հառավոտը բռնեցին հարսանիքը. օխտը օր, օխտը քշեր քեֆ  
արին, հ'ուրախացան, Ամիր-Շամիրին ու Ալմաստին փսակեցին,  
քերին տուն:

Մի քանի օրից ետո Ամիր-Շամիրը առավ հ'իրան կնիկը, թա-  
քավորի տված ժողովութը, վե կացավ գնաց հ'իրա հոր ավեր քա-  
ղաքը: Թաղաքը շենացրուց, կարք ու կանոն դրուց, հ'իրա հոր հի-  
շատակը թաղացրուց:

Իրեք տարուց ետո Ալմաստն ազատվեց, բերուց մի հատ լավ  
տղա: Տղա՛ ինչ տղա, էլ կարալ շեմ ասիլ, հ'աշկ պըտի ըլի, որ  
տենի, լեղու պըտի ըլի, որ գուլի:

Տղեն դառավ օխտը տարեկան, պապը նոր միտը բերուց հ'իրա  
ախշըկան, վե կացան զորք վե կալան, էկան հ'իրանց ախշըկան տե-

Նելու էկան շինարի ծառի տակը վեր էկան, որ քշերը ըտեղ մնան,  
հառավոտը էթան հիրանց ախշըկա տումը:

Գանք Ամիր-Շամիրի տղի կուշտը: Տղեն ձին նի էլալ, զնաց-  
ավի. իրեք սար ման էկավ, հել բան շտեհավ, էկավ Քոռ գեի սընո-  
ռը, մի հատ մարալ դուռ էկավ ձիու հառավը: Մարալը զնաց՝ հին-  
քը գնաց, մարալը գնաց՝ հինքը գնաց, գնաց տեհավ որ մի Քոռ-  
դն մի զորքի հառավը բռնել ա՝ կոտորըմ ա. որ գեը գոռըմ չի է,  
երկինք-գետինք դողում ա:

— է՛, թաքավոր,—ասեց տղեն,—դուք դինչացեք, ըսոր կոխվե-  
իմն ա:

Ասեց ու քշեց դըրա Քոռ գեը, դրանք վեր էկան՝ թամաշ արին:  
Տղեն ձին քշեց, թուրը հաղացրուց, թուրը թցելուն պես՝ դեի-  
գլուխը ֆռոաց, թուրը դրուց ճակատին՝ էկավ թաքավորի հառա-  
վին կաննեց.— Էս է՛ր, ըսդար վախտ բանտ իք ըլեւ:

— Հտենց կըլի, որթի՛, ջահել ես,

Քշերը ըտտեղ կացան դրանք, հառավոտը ընկան ճամփա:  
Ճամփին թաքավորն ասեց.— Ա՛յ տղա, ո՞ւմ տղեն ես:

Ասեց.— Ամիր-Շամիրի տղեն եմ:

Ասեց.— Դո՞րթ:

— Բա լէ՛ սուտ:

— Մորդ անըմն ի՞նչ ա:

— Ալժաստ:

— Վա՛յ դու իմ թոռն ես,— ասեց թաքավորը ու փաթըթվեց:  
տղին, Տատը մգար դիմանըմ ա:

— Մերդ սա՞ղ ա, այ բալես,— ասեց ու հինքն էլ փաթըթվեց:

— Սաղ ա, տատի ջան, դուք իմ մոր ի՞նչն եք:

— Քու մերը մեր ախշիկն ա, ա՛յ բալամ:

Գնացին, հասան տում, կերան խմեցին՝ ուրախացան, դրանք  
հասան հիրանց մուրաղին, դուք էլ հասնեք ձեր մուրաղին:

Երկնքից իրեք խնձոր ընկավ, մեկը՝ ասողին, էրկուաը՝ լսողին:

